



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 6

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2019 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 20-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. 2018-19 ուստարվա 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում (զեկ. Ա. Սարգսյան):
2. Լուծարքային շրջանի ընթացքը ֆակուլտետում (զեկ. Ա. Գալստյան):
3. Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
4. Հայոց լեզվի ամբիոնի՝ մագիստրատուրայի ուսուցման գործընթացներում փոփոխություններ կատարելու առաջարկի քննարկում:
5. Պետական ավարտական թեզերի պաշտպանության արդյունքների քննարկում:
6. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը իր խոսքի սկզբում տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից այս պահին նիստին մասնակցում է 28-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն քվեարկությամբ:

Օրակարգի 1-ին` 2018-19 ուստարվա 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփման **հարցի** մասին զեկուցեց հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Մարգարյանը: Նա մասնավորապես ասաց, որ ամանորյա արձակուրդներից անմիջապես հետո բնականոն անցկացվել է բանավոր քննաշրջանը, և չեն նկատվել խախտումներ կամ բողոքներ. հնարավորինս պահպանվել է գնահատման անաչառությունը: Քննաշրջանի արդյունքները նման են ընդունված միջինին:

Հաջորդ զեկուցումը նվիրված էր **օրակարգի 2-րդ հարցին`** ֆակուլտետում լուծարքային շրջանի ընթացքին: Այդ առիթով դոց. Ա. Գալստյանը զեկուցեց, որ գործում է ռոտացիայի նոր տարբերակ, որով ուսուցման անվճար-վճարովի հարաբերակցության մեջ ուսանողն այժմ կորցնելու բան չունի: Մտահոգիչ է, որ 65 ուսանողներ առաջին լուծարքից հետո դեռևս պարտքեր ունեն:

Օրակարգի 3-րդ հարցի առիթով (գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի տարեկան հաշվետվությունը) ելույթ ունեցավ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչ դոց. Ա. Ջրբաշյանը: Նա զեկուցեց հետևյալը.

- Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնը թեև փոքր է (ընդամենը 6 դասախոս` 4 դրույքով), այնուհանդերձ բավական էական դեր է կատարում ֆակուլտետի գիտամանկավարժական կյանքում: Ամբիոնի դասախոսները հաշվետու ժամանակաշրջանում տպագրել են գիտական շուրջ մեկուկես տասնյակ հոդվածներ, ընդ որում` ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանի տարբեր քաղաքներում (Մոսկվա, Յակուտսկ, Խանտի-Մանսիյսկ), նաև Երուսաղեմում և Տորոնտոյում: Հովհ. Թումանյանի 150-ամյա հոբելյանի կապակցությամբ լույս է տեսել Մ. Ջանփոլադյանի «В мире Туманяна» մենագրությունը: Ժ. Քալանթարյանը և Ա. Ջրբաշյանը 50-ից ավելի մեծ և փոքր հոդվածներով մասնակցել են «Թումանյանական հանրագիտարանի» ստեղծման աշխատանքներին, որը կտպագրվի ընթացիկ տարում: Ա. Սեմիրջյանը մասնակցել է երկու գիտաժողովների. մեկը` Հովհ. Թումանյանի թանգարանում կազմակերպված հեքիաթագիտության գիտաժողովը, որտեղ հանդես է եկել զեկուցմամբ, մյուսը` Իտալիայի Վերոնա քաղաքում կայացած միջազգային գիտաժողովին, որտեղ հանդես է եկել հայ-ադրբեջանական գրական փոխառնչակցության հարցերին նվիրված զեկուցմամբ: Օրերս լույս է տեսել Ա. Բեքմեզյանի «Սահմա-

նային ժանրեր» վերնագրով հողվածների ժողովածուն, որտեղ ընդգրկված են ինչպես արդեն տպագրված, այնպես էլ նոր գրված հողվածներ:

Ամբիոնում մշտապես թարմացվում և արդիականացվում են մագիստրոսական դասընթացները՝ հարմարեցվելով ժամանակակից գրականագիտության պահանջներին: Մակայն ինչպես մյուս, այնպես էլ մեր ամբիոնը վերջին տարիներին ունենում է մագիստրատուրայի հետ կապված լուրջ խնդիրներ, որոնք ունեն ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ: Մասնավորապես պետք է նշել համալսարանի ղեկավարության կողմից հումանիտար մասնագիտությունների համար 10-հոգանոց խմբի սահմանումը (այն դեպքում, երբ բնագիտական մասնագիտությունները կարող են 7-8 հոգանոց մագիստրատուրա ունենալ), մագիստրատուրայի առաջին կուրսի առաջին կիսամյակի ծրագիրը, որը վանում է շատ ուսանողների, սովորողների թվի տարեցտարի նվազումը և այլն:

Ամբիոնի դասախոսները շարունակաբար ղեկավարում են ասպիրանտներ և հայցորդներ, մասնակցում են գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների աշխատանքներին:

Ամբիոնի աշխատանքը բարձր է գնահատվում նաև ուսանողների կողմից՝ մշտապես արտացոլվելով սոցիալական տարեկան բարձր արդյունքներում:

Գիտական խորհրդի անդամները հաշվետու ժամանակամիջոցում գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի կատարած աշխատանքները գնահատեցին բավարար:

Գիտական խորհրդի նիստի **օրակարգի 4-րդ հարցը** նվիրված էր հայոց լեզվի ամբիոնի առաջարկին՝ կապված մագիստրատուրայի ուսուցման գործընթացներում փոփոխություններ կատարելուն: Ընդարձակ զեկուցմամբ հանդես եկավ նիշյալ ամբիոնի վարիչ պրոֆ. Յու. Ավետիսյանը: Նա մասնավորապես նկատեց, որ մագիստրատուրայի ուսուցման գործընթացներում փոփոխություններ կատարելն այսօր դարձել է խիստ անհրաժեշտ, և այն օրվա հրամայականն է. պետք է մտածել մագիստրատուրայի ուսումնառությունը 1,5 տարի դարձնելու մասին. հաշվարկները ցույց են տալիս, որ կրթության այդքան տևողությունը կբերի վարձավճարի 15 %-ի կրճատում և ուսանողների քանակական աճ: Ամբիոնն արդեն պատրաստել է համապատասխան չափորոշիչներ:

Գիտական խորհրդի մյուս անդամները (դոց., դոց. Վ. Պետրոսյան, Ա. Ջրբաշյան...), ողջունելով հանդերձ պրոֆ. Յու. Ավետիսյանի առաջարկը, նշեցին, որ հարցը շատ նուրբ է, անհրաժեշտ է լրացուցիչ ուսումնասիրություն. չպետք է հապճեպ որոշումներ ընդունել, քանի որ բացառված չէ, որ փոփոխությունն ունենա անցանկալի հետևանքներ: Որոշվեց մագիստրատուրայի ուսուցման գործընթացներում փոփոխություններ կատարելու առաջարկը քննարկել բոլոր ամբիոններում, ապա նոր հանդես գալ միասնական կարծիքով:

Օրակարգի 5-րդ հարցում քննարկվեցին պետական ավարտական թեզերի պաշտպանության արդյունքները: Պրոֆ. Ա. Ավագյանը նկատեց, որ խոսքը վերաբերում է մագիստրոսական թեզերի հեռակա ուսուցմանը: Հայտնի է, որ այս տարի պաշտպանողների թիվը խիստ սահմանափակ էր՝ ընդամենը մի քանի հոգի, և նրանք հիմնականում դրսևորեցին գոհացուցիչ արդյունքներ:

ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐՈՒՄ՝

Լ Ս Ե Ց Ի Ն - Բանասիրական գիտությունների թեկնածու, հայոց լեզվի պատմության ամբիոնի ասիստենտ **Նաիրա Վրույրի Պարոնյանի** դոցենտի գիտական կոչման գործընթացին մասնակցելու համար միջնորդություն տալու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Բ. Ներսիսյանը, Ս. Գրիգորյանը և ուրիշները:

Նշվեց, որ ասիստենտ Նաիրա Վրույրի Պարոնյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է: 1991 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հ. Թումանյանը և հայ նոր գրական լեզվի հարցերը» թեմայով: 2001թ. տպագրել է մենագրություն՝ «Հ. Թումանյանը և հայ նոր գրական լեզվի հարցերը», ուսումնամեթոդական աշխատանք՝ «Գրաբարի բայի անցյալ կատարյալի հիմքի ուսուցումը բուհում» (համահեղինակ՝ Ռ. Շաբոյան), հրատարակել է գիտական 28հոդված: 1990 թվականից աշխատում է հայոց լեզվի ամբիոնում՝ որպես ասիստենտ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ բանասիրական գիտությունների թեկնածու, հայոց լեզվի պատմության ամբիոնի ասիստենտ **Նաիրա Վրույրի**

Պարոնյանին մասնակցելու դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

Լ Ս Ե Ց Ի Ն – Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ Բ. Գ. Թ., դոց. **Վ. Զ. Պետրոսյանի** դոկտորական ատենախոսության («Հին հայերենի պատմական հնչույթաբանություն») անվանափոխության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը և Լ. Հովսեփյանը:

Նշեց, որ չնայած ատենախոսության վերնագրում եղած «պատմական» բաղադրիչին, իրականում աշխատանքը գրվել է երկու հայեցակետով՝ համաժամանակյա (նկարագրական) և տարաժամանակյա (պատմական): Այդպիսի մոտեցումը պայմանավորված է հին գրական հայերենի հնչույթային համակարգի գրեթե բոլոր բաղադրիչների վերաբերյալ հայերենագիտության մեջ տեղ գտած իրարամերժ տեսակետների առկայությամբ, իսկ առանձին դեպքերում՝ հեղինակի ունեցած ուրույն պատկերացումներով: Այդ պատճառով էլ ճիշտ է համարվել հին հայերենի հնչույթաբանական իրողությունները քննել նախ՝ համաժամանակյա (նկարագրական) հայեցակետով, որից հետո միայն անցնել դրանց պատմական քննությանը՝ ընդհանուր հնդեվրոպական շրջանից մինչ գրաբարյան հայերեն զարգացման ճանապարհին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Բ. Գ. Թ., դոցենտ **Վ. Զ. Պետրոսյանի** դոկտորական ատենախոսության թեման վերահաստատել «Հին հայերենի հնչույթային համակարգը» ձևակերպումով:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (հեռակա ուսուցում) **Սարին Ագապաջ Բուզանդի** ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Լ. Թեյսյանը, Բ. Ներսիսյանը և ուրիշները:

Նշվեց, որ Սարին Ագապաջը 2018 թ. ավարտել է պատմության ֆակուլտետի սփյուռքագիտության ամբիոնի մագիստրատուրան՝ «Հայագիտություն» մասնագիտացմամբ, 2019 թ. հանձնել է ընդունելության քննությունները և ընդունվել ասպիրանտուրա՝ հեռակա ուսուցում, «Հայոց լեզու» մասնագիտության գծով՝ Ժ.02.01:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - 1. Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Սարին Ազպաշի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել <<Արդի արևմտահայերենի կանոնարկման հիմնախնդիրները>>՝ Ժ. 02 .01 <<Հայոց լեզու>> մասնագիտացմամբ:

2. Սարին Ազպաշի ատենախոսության գիտական ղեկավար հաստատել պ. գ. դ., դոց. Հակոբ Չոլաքյանին:

Վերջում նախագահողը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին, ելույթ ունեցողներին, և գիտական խորհրդի նիստը համարվեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ